ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄՆ ՈՒ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

(Երևան, Ալեքսանդրապոլ)

Ճարտարապետության դոկտոր Վ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռուսաստանի հետ միավորվելուց հետո, սոցիալ-պատմական նոր իրադրության պայմաններում Արևելյան Հայաստանի քաղաքներ Երևանը, Ալեքսանդրապոլը, հետագայում նաև Կարսը թևակոխում են իրենց զարգացման մի նոր փուլ և սկսում դանդաղորեն բարեփոխվել։ Այդ պրոցեսը հետևանք էր քաղաքաշինական այն միջոցառումների, որոնք կիրառվեցին ու նպատակ ունեին որոշ չափով բարձրացնել հիշյալ քաղաքների կառուցապատման ու բարեկարգման մակարդակը։

Արևելյան Հայաստանում առանձնահատուկ պայմաններում սկսվեցին արմատավորվել Ռուսաստանում լայնորեն կիրառություն գտած ու իր ժամանակի համար առաջադեմ քաղաքաշինական-ճարտարապետական մշակույթի սկզբունքները։ Դրանց զուգակցությունը տեղական բազմադարյան ու հարուստ ավանդույթների հետ ընդհանուր առմամբ բարերար ներգործություն ունեցավ ու նպաստեց այն ինքնատիպ նկարագրի կազմավորվելուն, որով Արևելյան Հայաստանի քաղաքներն ու որոշ բնակավայրերը հասան մինչև հայ ժողովրդի պատմության նոր դարագլուխը՝ սովետական ժամանակաշրջանը։

Ներկա հոդվածում, հենվելով արխիվային փաստաթղթերի ու պատմական աղբյուրների, ինչպես նաև տեղերում կատարված հետազոտությունների արդյունքների վրա, փորձ է արվում ամենաընդհանուր գծերով բնութագրել քննվող ժամանակաշրջանի քաղաքաշինական վերափոխությունների պատկերը և տալ դրանց գնահատականը։

Կիրառված քաղաքաշինական միջոցառումների մեջ առավել կարևորը պետք է համարել գլխավոր հատակագծերի կազմումը, որոնցով (հատկապես XIX դարի երկրորդ կեսին ու այնուհետև) ընթացավ հիշյալ քաղաքների վերակառուցումը, ընդարձակումը և նոր մասերի կառուցապատումը։ Թեև առանձին քաղաքների համար գլխավոր հատակագծերը կազմվել են տարբեր ժամանակներում ու տարբեր մասնագետների կողմից, սակայն բոլորի հիմքում դրված է եղել միևնույն՝ կանոնավոր հատակագծման սկզբունքը, որը նորույթ էր միջնադարում տարերայնորեն կառուցապատված հայկական բնակավայրերի քաղաքաշինության պրակտիկայում[1]։

---

[1] *Արևելյան Հայաստանի բնակավայրերի քաղաքաշինական-ճարտարապետական բարեփոխությունների հակիրճ բնութագիրը տվել է Հ. Խալփախչյանը, նշելով Ռուսաստանի բարերար ազդեցությունը (տե՛ս* «Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре», Ереван, 1957; *էջ 41—47)։*

Անկախ կազմված հատակագծերի հեղինակների մասնագիտական մակարդակից և այն հանգամանքից, որ կանոնավոր հատակագծման սկզբունքը կիրառվել է իրարից տարբեր, երբեմն ոչ լիովին հարմար պայմաններում (օր. Ալեքսանդրապոլում), կանոնավորության արմատավորումը մեր քաղաքների կառուցապատման պրակտիկայում իր ընդհանուր արդյունքներով, անտարակույս, դրական գնահատականի է արժանի։

Քաղաքաշինական վաղագույն փաստաթղթերը վերաբերում են Երևանին և Ալեքսանդրապոլին։ Երկուսն էլ նշված են միևնույն 1837 թ.[2], այսինքն կատարված են Ռուսաստանի հետ միավորվելուն հաջորդող առաջին տասնամյակում։

Երևանի քաղաքաշինական իրավիճակը արձանագրված է 1808 և 1828 թթ. վերաբերող տեղահանությային հատակագծերում[3]։ Նրանց վրա քաղաքատարածության հարավային մասում, արևելյան կողմից տեղ է գրավում Դամիր-Բուլաղ կոչված ընդարձակ թաղամասը, իսկ արևմտյան կողմից, Հրազդանի ձորեզրին՝ Երևանի բերդը հարակից թաղերով (նկ. 1, տախտ. I, 1)։ Քաղաքի մյուս բաղկացուցիչ մասը՝ Շահարը կամ Արարատյան թաղը գրաղեցնում էր քաղաքատարածության հյուսիս-արևելյան կողմը, իսկ Կոնդն ու նրանից հարավ ընկած շուկայական հրապարակը՝ հյուսիս-արևմտյան կողմը։ Կոնդի և Շահարի միջև գտնվում էր Խանի այգի կոչված մի ընդարձակ տարածություն։ Քաղաքի արևմտյան սահմանը կազմում էր Հրազդանի խոր կիրճը (որով ոլորապտույտ, հյուսիսից դեպի հարավ հոսում է գետը), հյուսիս-արևելյանը՝ Քանաքեռի սարահարթը, իսկ արևելյանը՝ Նորքի այգեպատ բարձունքները։ Բարձունքներով շրջապատված քաղաքատարածությունը հարավային կողմից շարունակվում էր դեպի Արարատյան դաշտը։

1828 թ. Թուրքմենչայի պայմանագրի համաձայն Պարսկաստանից հայերի ներգաղթելու և նրանց մի մասին Երևանում բնակեցնելու կապակցությամբ Խանի այգու արդեն բարձիթող դարձած տարածության վրա սկսում է առաջանալ բնակելի Նոր թաղը։ Սրա կառուցապատումը կատարվել է 3—4 ուղղագիծ, միմյանց զուգահեռ փողոցների ուղղությամբ, որոնք ցույց են տրված Երևանի 1837 թ. վերը հիշատակված հատակագծում և հանդիսանում են քաղաքի փողոցների ապագա ցանցի առաջնեկները (տախտ. I, 3)։

Հետագա տարիներին հատակագծման այդ սկզբունքը առավել զարգացում է ստանում ու կիրառվում է Հին Երևանի կամ Շահարի վերակառուցման ժամանակ։ Դրա մասին է վկայում Կովկասի փոխարքայի կողմից 1856 թ. դեկտեմբերի 23-ին հաստատված գլխավոր հատակագիծը, որով քաղաքի նշված մասի հողատարածությունը պիտի վերակառուցման ենթարկվեր կանոնավոր հատակագծման սկզբունքով[4] (տախտ. I, 5)։ Այս հատակագծի կազմումն ու հաստատումն ունի իր նախապատմությունը, որի մասին արխիվներում պահպանվել են ուշադրության արժանի փաստաթղթեր։

---

[2] Երևանինը տե՛ս ЦГВИА, коллекция военно-топографических карт, планов и схем, фонд 349, оп. 44, ед. хр. 1521. Ալեքսանդրապոլինը՝ նույն տեղում, фонд 349, оп. III, ед. хр. 922.

[3] Հրապարակված է Հ. Խալփախչյանի «Гражданское зодчество Армении» գրքում, М., 1971, էջ 30։

[4] Հատակագիծը պահվում է Երևանի պատմության թանգարանում։ Հրատարակված է Б. М. Арутюнян, М. М. Асратян, А. Л. Меликян, Ереван, М., 1968, նկ. 46։



Նկ. 1

1855 թ. մայիսի 7-ով թվագրված մի գրությամբ, որը ստորագրել են Երևանի զինվորական նահանգապետ Ի. Ի. Նաղարովը, իր տեղակալ Բլավատսկին և երկու այլ պաշտոնական անձինք (ազգանունները անընթեռնելի են), դիմել են Անդրկովկասի երկրամասի նահանգական վարչության պետ գեներալ-լեյտենանտ Իոսիֆ Անտոնովիչ Գեգրուպտին, խնդրելով հաստատել Երևանի հատակագիծը։ Գրությունը պարունակում է որոշ բացատրություններ հաստատման ներկայացվող հատակագծում կիրառված սկզբունքների վերաբերյալ։ Փողոցների ուղղությունները, ասված է նրանում, տրված են Երևանի ինժեներական խմբի (որը ենթակա էր զինվորական նահանգապետին) պետ ինժեներ-գնդապետ Տուրչանինովի ցուցումների համաձայն (սա էլ իր հերթին ղեկավարվել է ինժեներական օկրուգի պետի հանձնարարականներով), փողոցների ցանցը անց է կացված քաղաքի տեղանքին, նախապես գոյություն

ունեցող փողոցներին ու կառուցապատված թաղամասերին համապատասխան։ Հատակագծի վրա առկա նախագծային գծերը տարված են քաղաքի այն մասում, որը Նոր է կոչվում։ Հատակագծումով չի ընդգրկված միայն Զոլմաքչին՝ այսինքն Նորքը (Կոնդի մասին ոչինչ չի ասված), որովհետև ըստ տեղանքի շատ դժվար է նրա նախագիծը կատարել առանց մեծ քանդումների («без больших сломок»)։ Այդ պատճառով էլ, ըստ գոյություն ունեցող օրենքների այն պիտի մնա անփոփոխ («и должны оставаться в таком положении»)[5].

Ինչպես պարզվում է, Կովկասի և Անդրկովկասի քաղաքացիական մասի կառավարիչ գեներալ-լեյտենանտ Վ. Բեհբուդովին Երևանի նահանգի քաղաքացիական մասի կառավարիչ գեներալ-մայոր Ի. Ի. Նազարովի 1856 թ. օգոստոսի 31-ին ուղղված զեկույցից, հաստատման ներկայացված Երևանի 1855 թ. հատակագիծը նույն թվականի հունիսի 10/19-ին № 1145 գրությամբ հետ է վերադարձված, որպես «անբավարար կազմված» («как неудовлетворительно составленный») և առաջարկված է ուղղել այն կամ նորը կազմել[6]։ Այդ կապակցությամբ Երևանում աշխատանքներ են ձեռնարկվում քաղաքի նոր հատակագիծ կազմելու ուղղությամբ. գործը հանձնարարվում է Երևանի նահանգական հողաչափ, կոլեժսկի ասեսոր Ա. Ստացկուն։ Վերջինս կազմում է հատակագծի երկու նոր տարբերակ ու համապատասխան փաստաթղթերի հետ միասին (Երևանի վերաբերյալ 1851 թ. կազմված տեղեկանք-նկարագրության ու մի զեկույցի, որը թվագրված է 1856 թ. օգոստոսի 14-ով) ներկայացնում է գեներալ-մայոր Ի. Ի. Նազարովին ի տնօրինություն[7]։ Գործի մեջ կա ևս մի գրություն՝ գրված նույն թվականի դեկտեմբերի 19-ին։ Նրանում խնդրվում է ըստ հնարավորին արագացնել ներկայացված հատակագծի հաստատումը, որովհետև Երևանի բնակիչները անդադրում դիմում են անում տներ կառուցելու համար նախագծեր («фасады на постройку домов») տրամադրելու հարցով ու այդ դիմումները չեն բավարարվում, քանի որ հատակագիծը առայժմ չի հաստատված, իսկ առանց դրա չեն ուզում կառուցապատում կատարել[8]։ Նույն ամսի 23-ին հատակագիծը հաստատվում է։

Վերը քննարկված փաստաթղթերից կարելի է անել հետևյալ եզրակացությունները. ա) Երևանի 1856 թ. հատակագիծը կազմելիս քաղաքում կային նախորդ հատակագծի կիրառության հետևանքով կազմավորված փողոցների ուղղություններ ու կառուցապատված թաղամասեր, որոնք հաշվի են առնվել ու պահպանվել, բ) Հատակագիծը հիմնականում ընդգրկում էր Նոր թաղը, գ) Բնակելի տները կառուցվում էին ըստ տրամադրված նախագծերի։

Քաղաքի հաջորդ՝ 1865 թ. հատակագծի համաձայն, նույն սկզբունքների պահպանությամբ, փողոցների կանոնավոր ցանցով ընդգրկվում են նաև Դամիր-Բուլաղ թաղի զգալի մասը[9] (տախտ. I, 4)։

---

5 ЦГИА Груз. ССР, ф. 3, оп. 1, д. 4184, թ. 1։

6 Նույն տեղում, թ. 7—9; Տեքստում ասված է. «...исправить этот план, или если исправление окажется невозможным, составить вновь, согласно правилам, изложенным в циркуляре г. министра внутренних дел от 11 мая 1841 года № 1339 и вновь представить к Вашему снятельству для дальнейшего распоряжения».

7 Նույն տեղում, թ. 10—15։

8 Նույն տեղում, թ. 22։

9 Արխիվներում այս նոր հատակագծի վերաբերյալ չի հաջողվել համապատասխան նյութեր



Տախտակ I

Ինչպես երևում է նշված հատակագծերից, Դամիր-Բուլաղի տարածության վրա՝ սկսած Տեր-Ղուկասովի (այժմ՝ Նալբանդյան) փողոցից, հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք ձգված փողոցների ուղղությունը որոշ անկյան տակ բեկվում է դեպի արևելք, համապատասխանաբար փոխելով ուղիղ անկյան տակ սրանց հատող փողոցների ուղղությունը։ Այսպիսով, Երևանի հին կառուցապատում ունեցող և համատարած այգիներով ողողեցրած համեմատաբար հարթ «կաթսան» ընդգրկվում է ճառագայթաձև տարածվող փողոցների կանոնավոր ցանցով՝ առաջացնելով տարբեր չափերի ու հիմնականում ուղղանկյուն բնակելի թաղամասերի համակարգ։

Երևանի գլխավոր հատակագծի կենսագործմանը առավել զարկ է տրվում փաստորեն 1862 թ., երբ սկսվում է Կրեպոստնայա (հետագայում՝ Աստաֆևի, այժմ՝ Աբովյան) փողոցի բացումն ու կառուցապատումը։ Հյուսիս-արևելքից («Պլանի գլուխ») դեպի հարավ-արևմուտք ձգված ու մոտ 1 կմ երկարություն ունեցող այս փողոցն անցնում էր քաղաքի կենտրոնական մասով, հին քաղաքի և նոր թաղի տարածությունների վրայով՝ արդեն բացված միմյանց զուգահեռ մի քանի փողոցներին ուղղահայաց։

XIX դարի երկրորդ կեսի ընթացքում փողոցների այդ կանոնավոր ցանցը հետզհետե իրականացվում է, առաջացնելով Աստաֆևի փողոցին զուգահեռ փողոցների (այժմյան Լենինի պողոտա, Տեր-Գաբրիելյանի, Տերյանի, Նալբանդյանի և Ալավերդյանի) համակարգը։

Քաղաքի գործարար կենտրոնը ավանդական շուկայի ընդարձակ հրապարակն էր՝ ընկած Բերդի ու Կապույտ մզկիթի միջև, իր զանթարով, առևտրական ու արհեստավորական շարքերով, իջևանատներով ու այլ շենքերով։ Երևանում կային նաև երկրորդական հրապարակներ՝ Ֆայլա-բազարը, Նոր կամ Փանահ-խանի հրապարակը (այժմյան՝ Ազիզբեկովի), որը ձևավորվեց XIX դարի 50—60-ական թթ.։

XIX դարի երկրորդ կեսին և հատկապես վերջին տասնամյակներին է՛լ ավելի ակնառու են դառնում Երևանի հիշատակված գլխավոր հատակագծերում ներդրված քաղաքաշինական մտահղացումների կիրառման արդյունքները։ Բարձունքներով շրջապատված քաղաքի կենտրոնական մասում հիմնականում իրականացում է ստանում փողոցների կանոնավոր ցանցով կազմավորված կառուցապատումը՝ հողաշեն ու քարաշեն 1—2 հարկանի բնակելի տներով ու այլ բնույթի շենքերով։ Նազարովսկայա (Ամիրյանի), Բեհբուդովսկայա (Սվերդլովի), Ցարսկայա (Սպանդարյանի), Թարխանովսկայա (Պուշկինի և Կնունյանցի), Դոկտորսկայա (Թումանյանի) և նրանց ուղիղ անկյան տակ հատող Արմյանսկայա (Լենինի պողոտա), Մալյարսկայա (Տերյանի), Աստաֆևի (Աբովյանի), Տեր-Ղուկասովի (Նալբանդյանի) և Գուբերնսկայա (Ալավերդյանի) փողոցներով ստեղծվում է անցյալում տարերայնորեն կառուցապատված Երևանի քաղաքաշինական նոր հենքը և ճարտարապետական դիմանկարը։

Երևանի XIX դարի վերջի քաղաքաշինական իրավիճակի մասին ընդհանուր գաղափար կազմելու տեսակետից արժեքավոր փաստաթուղթ պետք է համարել Ղ. Ալիշանի «Այրարատում» հրապարակած հատակագիծը[10] (տախտ.

գտնել։ Բնագիրը պահվում է Երևանի պատմության թանգարանում և հրատարակված է (տե՛ս В. М. Арутюнян, М. М. Асратян, А. А. Меликян, նշվ. աշխ., նկ. 47։

10 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 310—311։

I, 6)։ Նրանից պարզ են ղառնում տվյալ ժամանակաշրջանում Երևանի հիշյալ հատակագծային մտահղացումների իրականացման չափն ու սահմանները, քաղաքի բաղկացուցիչ մասերի տեղաբաշխումն ու փոխադարձ կապը։ Համաձայն այդ փաստաթղթի, փողոցների կանոնավոր ցանցով ընդգրկված էր Շահարի

Նկ. 2

զգալի տարածությունը՝ ամփոփված այժմյան Սայաթ-Նովայի և Մարքսի, մյուս կողմից Լենինի պողոտայի և Նալբանդյան փողոցի միջև։ Նույնպիսի ցանցով ընդգրկված էր նաև «անգլիական» (26 կոմիսարների) այգուց մինչև Ամիրյան և քաղաքային բուլվարից (Լենինի և Շահումյանի հրապարակների միջև) մինչև 26 կոմիսարների փողոցն ընկած տարածությունը։

Քաղաքի մնացած մասերը՝ Կոնդը, Ջորագյուղը, Բերդի թաղը և Նորքը հատակագծմամբ ընդգրկված չլինելով, վերակառուցման չեն ենթարկվել։

Այսպիսին է դարավերջին արդեն 29 հազարից ավելի բնակիչ ունեցող Երևանի հատակագծմամբ կատարված քաղաքաշինական բարեփոխությունների ընդհանուր պատկերը (նկ. 2)։

Ալեքսանդրապոլը, որ առաջացավ հին ամրոցի մոտ ընկած և Գյումրի (Կումայրի) անունը կրող բնակավայրի տեղում, դառնալով արևելյան Հայաստանի երկրորդ կարևոր քաղաքը, նույն կարգի քաղաքաշինական բարեփոխությունների ենթարկվեց։ Նրա զարգացման ազդակներից մեկը հանդիսացավ 1828—1830 թթ. ընթացքում Էրզրումից, Բայազետից և Կարսից շուրջ 2500 ընտանիքների ներգաղթն այստեղ[11]։ Դրա հետ մեկտեղ քաղաքի բնակչության աճին մեծապես նպաստեց ռուսական մշտական կայազորի առկայությունը քաղաքին կից ամրոցում։

Ալեքսանդրապոլի բերդը կառուցվել է արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորվելու առաջին տարիներին, որպես կայսրության հարավային սահմանի վրա ռազմական հզոր հենակետերից մեկը։ Այն տեղադրված է հին Գյումրիի և Ախուրյան գետի միջև ընկած ու շրջապատի նկատմամբ իշխող դիրք ունեցող բարձունքի վրա։ Նրա ընդարձակ համալիրի մեջ մտնում էին մթերքի ու զենքի պահեստներ, տնտեսական ու կոմունալ բնույթի կառուցվածքներ, զորանոցներ (որոնք կարող էին տեղավորել մինչև 15 հազար զորք, թեև մշտական կայազորի թիվը 4—5 հազարի էր հասնում[12])։ Բերդի հյուսիսային և հարավային ծայրամասերում տեղադրված են շրջանաձև հատակագծով, սև ու կարմիր տուֆաքարերով կառուցված ամրոցիկներ (որի պատճառով կոչվում են Սև զուլա և կարմիր զուլա)։ Բերդի բացառիկ ռազմավարական նշանակությունից ելնելով, զինվորական իշխանությունները նրա կատարելագործման ու հզորացման նկատմամբ 1834 թ. սկսած ցուցաբերել են մշտական հոգատարություն, որի մասին արխիվներում կարելի է հանդիպել մի շարք փաստաթղթերի[13] (տախտ. II, 4)։

Հետզհետե աճող Ալեքսանդրապոլի կորիզը հանդիսացավ «Ջերքեզի» և «Մխչոնց» ձորերի ու քարհանքների միջև, ձորաթմբին տեղավորված հին Գյումրին՝ պատմական Կումայրին։ Սրա հարավ և հարավ-արևելյան մասում է, որ սկզբում տարերայնորեն, առանց քաղաքաշինական որոշ ծրագրի, աստիճանաբար կառուցապատվում են Ալեքսանդրապոլի նոր թաղամասերը։

Եթե Ռուսաստանի հետ միավորվելու սկզբնական շրջանում հիմնական հոգատարության առարկան Բերդն է հանդիսացել[14], ապա սկսած 1837 թ., երբ Գյումրին վերանվանվում է Ալեքսանդրապոլ[15], քաղաքացիական իշխա-

---

11 Կ. Կոզմոյան, Լենինական, Երևան, 1957, էջ 13։

12 Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 154։

13 ЦГВИА, фонд 349, оп. III, ед. хр. 1073 (I—II). Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 154։

14 Արխիվներում պահպանված ու 1831 թ. ապրիլի 1-ով թվագրված մի փաստաթուղթ վերաբերում է Գյումրի ամրոցի («Форштадт Гумров») նախագծման համար հատուկ մասնագետ՝ ինժեներ-պորուչիկ Օրերգին գործուղելու հարցին (տե՛ս ЦГИА Груз. ССР, оп. I, д. 4341, թ. 6)։

15 Վերանվանումը կատարվում է 1837 թ. հոկտեմբերի 3-ին ռուսական ցար Նիկոլայ I-ի Գյումրի այցելելու կապակցությամբ, ի պատիվ Ալիքսանդրա Ֆեոդորովնա թագուհու։ Այդ մասին հիշատակություն կա Ալիշանի մոտ (տե՛ս «Շիրակ», էջ 154), ինչպես նաև արխիվում

նությունների ուշադրության ոլորտն են մտնում նաև քաղաքի հատակագծման ու կառուցապատման հարցերը։

Ինչպես երևում է 1837 թ. հունվարի 15-ով թվագրված և «План городу Гумров вновь предполагаемому» անվանված փաստաթղթերից[16], այն նույնպես, ինչպես Երևանինը, կազմված էր կանոնավոր հատակագծման սկզբուն-



Նկ. 3

քով և նկատի ուներ նոր քաղաքը կառուցապատել մի աղատ, համարյա հարթ տարածության վրա, որն ընկած էր Հին Գյումրիից դեպի արևելք։ Որոշ շեղությամբ հյուսիսից-հարավ և արևելքից-արևմուտք ձգված փողոցների ուղղանկյուն ցանցով քաղաքատարածությունը բաժանվում էր մեծ (100×150 մ) և փոքր (50×75 մ) թաղամասերի[17] (նկ. 3)։

պահպանված գործում (տե՛ս ЦГИА Груз. ССР, ф. 16. оп. 1, д. 5427), որը թվագրված է նոյեմբերի 8-ով ու կոչվում է՝ «Дело о высочайшем наименовании крепости Гумры впредь Александрополь».

16 Մի այլ փաստաթղթից (տե՛ս ЦГИА Груз. ССР, фонд 4, оп. 2, ед. хр. 470. թթ. 3, 4) պարզվում է, որ հատակագիծը հաստատվել է 1837 թ. փետրվարի 28-ին։ Կովկասի գեներալ-նահանգապետ Վորոնցովի անունով Կովկասյան առանձին ինժեներական կորպուսի պետ՝ գնդապետ Գանզենի 1848 թ. հունվարի 31-ի զեկույցում ի միջի այլոց ասված է. «Получив ныне копию с Высочайше утвержденного в день 28 февраля 1847 года плана городу Гумаров, что ныне Александрополь...».

17 ЦГВИА, фонд 349, оп. III, ед. хр. 922. Ինչպես երևում է գծագրի վրա կատարված

Հարկ է նշել, որ տեղանքի անհարթության պատճառով կանոնավոր հատակագծման սկզբունքի կիրառությունն այստեղ լիովին արդարացված չէ։ Եթե հյուսիսից հարավ ձգված փողոցներն ունեն բնականոն պրոֆիլ և թեքություն, ապա արևելք-արևմուտք ուղղություն ունեցող փողոցները ստացվել են հլեէջավոր ու այդ պատճառով քիչ են նպաստավոր անիվավոր տրանսպորտի համար[10]։

Չնայած այդ հանգամանքին, Ալեքսանդրապոլի կառուցապատման առաջին հատակագծով արմատավորված սկզբունքը պահպանվում է 1845 թ. և հաջորդ հատակագծերում[19] և աստիճանաբար իրականացում ստանում։

Քաղաքի հասարակական կենտրոնը շուկայի հրապարակն էր (այժմ՝ Մայիսյան ապստամբության անվան), որի շուրջը և նրանից սկզբնավորվող փողոցներում տեղաբաշխված էին բազմաթիվ խանութներ ու արհեստանոցներ, ինչպես նաև վարչական և կոմունալ շենքեր և եկեղեցիներ։

Արխիվներում պահպանվել են ուշագրավ փաստաթղթեր այն մասին, որ Ալեքսանդրապոլի հետագա կառուցապատումը դեմ է առել լուրջ խոչընդոտների և առաջացրել հակասություններ զինվորական իշխանությունների ու բնակչության միջև (տախտ. II)։ Ելնելով ռազմական մինիստրի 1844 թ. մայիսի 26-ի հրամանից, Թիֆլիսի նահանգական վարչությունը 1847 թ. նոյեմբերի 5-ի իր գրությամբ խստագույնս պահանջել է Բերդի մերձակա տարածությունները կառուցապատելիս պահպանել վերը հիշված հրամանով սահմանված 600 սաժեն հեռավորություն բերդի ու բնակելի թաղամասերի միջև։ Այդ ուշացած հրամանի կատարումը կպահանջեր քանդել-վերացնել արդեն կառուցապատված թաղամասերը, դադարեցնել շինարարությունը բերդամերձ տարածությունների վրա, գուցե և քաղաքը նորից նախագծել մի այլ տեղում[20]։ Սա նշանակում էր, որ քաղաքի կառուցապատման շահերը զոհաբերվում էին բերդի ռազմավարական շահերին, լիովին բխեցվում էին վերջինից ու ենթարկվում նրան։

Վիճելի հարցը կարգավորելու նպատակով Կովկասյան առանձին ինժեներական կորպուսի վարչության պետ՝ գնդապետ Գանղենն իր 1848 թ. հունվարի 31-ի գրությամբ հարցում է կատարում այն մասին, թե քաղաքի ո՞ր

մակագրությունից, հատակագիծը կազմված է Գյումրիի զինվորական ինժեներական խմբում և նրա հրամանատարի բացակայության պատճառով ստորագրված է պրապորշչիկ Գերշելի կողմից։

[18] Հ. Խալփախչյանը իրավացիորեն այդ որակել է որպես կանոնավոր հատակագծման սկզբունքի մեխանիկական կիրառություն (տե՛ս նշվ. աշխ., էջ 43)։

[19] ЦГВИА, фонд 349, оп. III, ед. хр. 1013 (1, 2), фонд 349, оп. 13, ед. хр. 1079 (1, 2).

[20] ЦГВИА Груз. ССР, фонд 4, оп 2, ед. хр. 470. թթ. 6—9։ Կովկասի գեներալ-նահանգապետ Ս. Վորոնցովին ուղղված զեկուցագրում նշված է. «Начальник запретил производить постройки, обязав жителей подписками отнюдь не строить ближе показанного расстояния, следовательно по его понятию, согласно новому постановлению о крепостях, город вновь выстроенный—должно сломать и вновь проектировать в другом месте, тогда как он весь построен и вошел в ту назначенную пропорцию». Կատարվածի օրինականությունը հիմնավորելու համար այնուհետև նշվում է. «...город Александрополь с крепостью проектирован и представлен был на Высочайшее утверждение инженерным ведомством в то время, когда не было еще последнего постановления, т. е. чтобы ближе 600 саженей не дозволять обивательских (домов — Վ. Հ.), и когда этот план подписался на Высочайшее утверждение, следственно положенные постройки были на плане проектированы, которые и утверждены и в натуре уже почти все застроены».



Տախտակ II

բարձրադիր մասերը տեսանելի են ամրոցից և ո՞ր մասերն են ծածկված (բառացիորեն գրված է՝ «...какие возвышенные местности в городе открыты с вала крепости и какие из них скрыты от крепостного огня»[21]. *Ստանալով պատասխանը (որը գործում չկա), նա Կովկասի գեներալ նահանգապետ Մ. Վորոնցովին ուղղած իր զեկույցում հայտնում է, որ կարելի է թույլ տալ շարունակել բերդամերձ տարածության կառուցապատումը*[22] *(տախտ. II, 1, 2)։*

---

21 *Նույն տեղում, թ. 3։*

22 «...Принимая во внимание пересеченную местность, на которой расположен город, я бы полагал безвредным для крепости допустить свободную застройку кварталов согласно утвержденного плана в тех местах, где они скрыты от крепостного огня, оставляя незатронутыми кварталы, кои приходятся на возвышениях, открытых с вала крепости» *(Նույն տեղում, թ. 5)։*

Նույն գործում գտնվող մի այլ փաստաթուղթ լույս է սփռում այն հարցի վրա, թե կառուցապատվող Ալեքսանդրապոլը ի՞նչ կարգով էր ապահովվում տների նախագծերով։ Ալեքսանդրապոլի առանձին կորպուսի ինժեներական բաժնի կողմից հարցում է կատարված այն մասին, թե արդյոք Ալեքսանդրապոլում ծառայող ինժեներական սպան կարող է զբաղվել նույն քաղաքի բնակիչների կողմից կառուցվող տների հատակագծեր ու ճակատներ (այսինքն՝ նա-

Նկ. 4

խագծեր—Վ. Հ.) հայթայթելու գործով։ Արդեն գեներալի աստիճանի արժանացած նույն Գանղենը իր գրությամբ այդ հարցին տալիս է դրական պատասխան[23]։

Քաղաքաշինական աշխատանքներն Ալեքսանդրապոլում ավելի ընդարձակվում են XIX դարի երկրորդ կեսին։ Կառուցապատման հիմքում ընկած էր 1868 թ. վերականգնված և Կովկասի փոխարքայի կողմից 1872 թ. սեպտեմբերի 9-ին հաստատված գլխավոր հատակագիծը[24], որը պահպանելով հանդերձ նախկին հատակագծերի (1837, 1841, 1845 թթ.) սկզբունքը, որոշ չափով ընդարձակում էր կառուցապատման ենթակա հողատարածությունը, ավելացնում միմյանց զուգահեռ և ուղղահայաց փողոցների ցանցը (նկ. 4, տախտ. II, 3)։

---

23 «Составление фасадов для постройки частных домов внутри всех вообще крепостей и укреплений наместить (?) архитекторов или землемеров. А в крайних случаях, т. е. где нельзя иметь ни архитектора ни землемера, то дело это по распоряжению местного коменданта поручается инженерным офицерам...».

24 Պահվում է Լենինականի քաղաքային արխիվում։

Առանձնապես ինտենսիվ են կառուցապատվում քաղաքի կենտրոնի փողոցները, էապես նպաստելով այս մասի ճարտարապետական դեմքի կազմավորմանը։ Այդ դերով են բնորոշ արևմուտք-արևելք ուղղություն ունեցող Ալեքսանդրովսկայա (Աբովյանի), Կարսսկայա (Սվերդլովի), Գեներալսկայա (Շահումյանի), Երևանյան ու սրանց ուղղահայաց՝ Պուշկինի, Լորիս-Մելիքովի, Բեհբուդովի (Մաքսիմ Գորկու), Թիֆլիսյան (Ռուսթավելու), Գրուզինսկայա (Վահան Տերյանի) և այլ փողոցները։

XX դարի սկզբին Ալեքսանդրապոլը ընդարձակվում է նաև զորանոցային երկու թաղամասերի՝ «Կաղաչի պոստի» (հարավից) և «Սեվերսկու» ու «Պոլիգոնների» հաշվին, որոնք կառուցապատվում են գերազանցապես սև երանգի տուֆով շինված միատիպ երկհարկանի տներով (մեծ մասամբ զորանոցներով ու այլ շենքերով)։ Համապատասխանաբար աճում է քաղաքի բնակչության թիվը։ Մինչև XIX դարը 70 ընտանիքից բաղկացած Դյումրին դառնալով քաղաք, 1865 թ. ուներ 17, մի տասնամյակ անց՝ 25 հազար բնակիչ[25], իսկ դարավերջին՝ համարյա այնքան, որքան Երևանը։

(Շարունակելի)

25 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 154։